«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Սովորողների քննադատական մտածողության զարգացումը պատմություն առարկայի ուսուցման գործընթացում»

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝Գոհար Ռաֆիկի Մանուկյան

Ուսումնական հաստատություն՝«Բջնիի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն
- Գրական ակնարկ
- Քննադատական մտածողություն:Նպատակն ու խնդիրները
- Քննադատական մտածողության զարգացումը պատմության դասավանդման ընթացքում
- Դասի օրինակ 9-րդ դասարան թեմա 4, դաս 2, էջ 42-47, բաժին 2 թեմա 6 դաս 1-2 էջ 56-62
- Եզրակացություն
- Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել:Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը:

Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը: Այս հետազոտության նպատակն է ստեղծել հիմք ձևավորելու քննադատական մտածողություն զարգացնող կրթական համակարգ, որն իր հերթին կարող է գործիք հանդիսանալ ինքնության հիմքի վրա ծագող կոնֆլիկտների կանխման, կարգավորման և հաշտեցման համար: Այսօր հաճախ է շեշտվում այն մոտեցումը, որ դպրոցի նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ:Այսօր դպրոցն ունի առավել բարդ առաքելություն՝ ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն քննադատաբար մտածելու իրական կյյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ: Քննադատական մտածողությունը նպաստող հմտությունների զարգացումը կարևորում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդական արժեքների պահպանման տեսանկյունից: Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերամիմաստավորելու և ձևավորելու բարդ

գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը: Քննադատական մտածողությունը ինքնուրույն

մտածողություն է:

Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները: Քննադատական մտածողությունը ուսուցման համակարգում նոր մոտեցում է, որը վերջին տարիներին լայն տարածում է գտել: Այս մոտեցումը միաժամանակ հին պատմական արմատներ ունի: Հայտնի են Սոկրատեսի առաջարկած հարցադրումների մեթոդը, Պլուտարքոսի և Մ. Ֆ. Քվինթիլիանոսի զարգացրած մոտեցումն, ըստ որի՝ աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել:Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը: Քննադատական մտածողության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն ամերիկյան մանկավարժներ Ջինի Լ. Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը, Չարլզ Թեմփլը և այլոք: Քննադատական մտածողություն եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է քննադատել բառին: Սակայն այս բառը ներառում է քննել և դատել բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Գրական ակնարկ

Մտածողությունը ճանաչողական գործունեության տեսակ է: Մտածողությունն առաջին հերթին իրենից ներկայացնում է ճանաչողական մոտիվացիա: Ըստ հոգեբանների մտածողությունն այն իմացական գործընթացն է, որի օգնությամբ մարդը կարողանում է ստացված դուրս գալ անմիջական զգայական արտացոլման միջոցով տվյալների հատկանիշները: Մտածողությունը շրջապատող միջավայրի առարկաների և երևույթների հարաբերությունների և կապերի իմացությունն է: Մտածողությունը միջնորդված և ընհանրացված իմացություն է, ունի սոցիալական պայմանավորվածություն, իսկ նրա բարձրագույն տեսակները կապված են խոսքիհետ:

Մտածողությունը իրենից ներկայացնում է <<մտքերի ու զուգորդությունների նպատակաուղղված հոսք, որը կարող է հանգեցնել իրականության հանդեպ եզրակացության>>: Ճանաչողական բազմաթիվ գիտնականների կողմից՝ Ռուբինշտեյն, Դունկեր,Զելց և այլոք:

Քննադատական մտածողություն:Նպատակն ու խնդիրները

Չնայած այն համընդհանուր համաձայնությանը, թե որքան կարևոր է քննադատական մտածողությունը, վերջինիս միասնական սահմանում թերևս չկա:Հայերենում խնդիրն առավել բարդ է,քանի որ տերմինը հայերեն է թարգմանվում անգլերենից և գոյություն ունեցող թարգմանությունը հաճախ չի արտացոլում այն ընդգրկուն հասկացությունը, որը ներդրված է անգլերեն տերմինի մեջ:Այսպես հայերենում ,,Քննադատական մտածողությունը,, ենթադրում է պարտադիր քննադատություն խնդրո առարկայի շուրջ,մինչդեռ ,critical thinking,

արտահայտությունն առավել ընդգրկուն է և ենթադրում է քննողական մոտեցում, այսինքն, խնդրո առարկայի բազմակողմանի քննարկում:Հետևաբար առավել նպատակահարմար կլինի եթե ,critical thinking,-ը թարգմանվեր ,,քննողական մտածողություն,,:

Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է, որպես ,,ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել ,,: Միքայել Սկրիվենը և Ռիչարդ Փոլը նշում են,որ քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության և /կամ հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու և գնահատելու մտավոր գործընթացը, որը ծառայում է որպես ուղեցույց անհատի համոզմունքների ձևավորման և գործողությունների

համար:

Քննադատական մտածողությունը մի գործընթաց է, որի հիմքը դրվում է դպրոցում աստիճանաբար,ուսումնառության յուրաքանչյուր փուլում: Դրա հիմնական նպատակն է ակտիվացնել ուսումնական գործընթացը: Ակտիվ քննարկումների արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում է աշխարհայացք, որը դուրս է նախապաշարմունքներից , ինքնուրույն վերաբերմունք այս կամ այն երևույթների հանդեպ: Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Այս հետազոտությունում ընդգծվում է աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում: Որպես ներգործության միջոց՝ առանձնացվում է հարցադրումներով իրականացվող ուսումնառությունը: Այն կօգնի բացահայտել պատմական փաստերի ու երևույթների պատճառահետևանքային կապերը, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով փոխանցելի հմտություններ:Այս հետազոտության նպատակն է առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ուերևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում: Առաջադրված վարկածն է՝ բաց հարցերի միջոցով իրականացվող ուսումնառությունը կարո՞ղ է նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը:Արդիականությունը: Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային

տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց

երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել

քննադատական մտածողության (այսուհետև՝ ՔՄ) որոշակի փոխանցելի հմտություններ:Մանկավարժական գործունեության ընթացքում իմ ուշադրության առանցքում մշտապես եղել է աշակերտների ստեղծագործական ու քննադատական

մտածողության հմտությունների զարգացումը: Տարվա ընթացքում աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց տվեցին, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:

Ելնելով այդ իրողությունից, առաջարկում եմ դասի կազմակերպման և իրականացման մի եղանակ, որը ընդառաջ է գնում նոր չափորոշիչներին և ճանապարհ հարթում նրանց իրագործման համար:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 9-րդ

Թեման՝ Հայաստանի սահմանների հարցը: Պայքար Լոռու, Ջավաղքի, Նախիջևանի, Զանգեզուրի և Արցախի համար:

Տիպը՝ Ամփոփման դաս

Մեթոդներ՝ Մտագրոհ, Վենիի-Տրամագիր, **Բանավեճ**

Նպատակները՝ 1.Ձևավորել այնպիսի բարոյական արժեքներ, ինչպիսիք են՝հայրենասիրությունը, հանդուրժողականությունը, ընկերասիրությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը և այլն: 2.Զարգացնել քննադատական մտածողությունը և լեզվական գրագիտությունը

Խնդիրները՝ 1.Զարգացնել աշակերտների իրականության հանդեպ փաստերն ու երևույթները ճիշտ ընկալելու և իրենց վերաբերմունքն արտահայտելու կարողություն:

2.Ներկայացնել հայոց պատմության անուղղակի իմաստի առաջադրումը:

3.Ձևավորել աշխարհայացք , հայրենասիրություն, դիվանագիտություն:

Վերջնարդյունքներ՝

Աշակերտները՝

1.Կհասկանան կարդացած տեքստի բովանդակությունը:

2.Կսովորեն ***վերաբերմունք դրսևորել*** գործող անձանց արարքների նկատմամբ:

3.***Կգնահատեն*** ժողովրդական արժեքների կարևորությունը:

4. Կկարողանան հայոց պատմության միջոցով ***մշակել*** վարքի չափանիշներ: **Անհրաժեշտ պարագաներ՝** 1.Տեղանունների վերաբերյալ աշակերտների ներկայացրած փաթեթները ,որոնք ստեղծվել են ամբողջ դասարանի կողմից թեմայի ուսուցման ընթացքում, 1918-22թթ

սահմանային խնդիրների վերաբերյալ: Քարտեզներ ,Հայոց պատմության ատլաս: 2.Համակարգչային ցուցադրումներ:

Դասի ընթացքը Խթանման փուլ. (մտագրոհ)Աշակերտները թվարկեցին «Սահմանային խնդիրները 1918-20թթ», «Վեճը», « ԼՂՀ», «Նախիջևան», «Ջավաղք», «Զանգեզուր » : Հարց ու պատասխանի ձևով ներկայացրեցին, սահմանային խնդիրները երեկ և այսօր:

Իմաստի ընկալում. Աշակերտները բաժանվեցին 4 խմբերի**:**

Խումբ 1-**ին-Կարս**/Կպչուն թղթերի վրա գրեցինք աշակերտներին հանձնարարվող հարցերը.Օրինակ՝հարց 1-Ձեր կարծիքով որն էր պատճառը, որ բարդ հարաբերություններ էին ստեղծվել ՀՀ-ի և ԽՌ-ի միջև.Հարց 2.Ինչ գիտենք Կարսի մասին և Կարսի դերը և ,, Սուրմալուի գավառը,,: Իրենց ուղղված հարցերին աշակերտները պատասխանեցին

,յուրաքանչյուրը հիմնավորեց իր միտքը և կարծիքը և քննադատաբար վերաբերվեց ժամանակի հերոսների թույլ դիվանագիտության նկատմամբ:

Կարսի մարզ

Խումբ 2-**րդ՝ ԼՂՀ** -Կպչուն թղթերի վրա գրեցինք աշակերտներին հանձնարարվող հարցերը: ՕրինակՀարց 1-Ինչ գիտենք ԼՂՀ-ի

մասին,Ինչպես հիմնավորեցին ԼՂՀ-ի ճակատագիրը հանձնելով Ադրբեջանին և ստեղծված իրավիճակում կար արդյոք տարաժքային հիմնախնդիրների լուժման այլ ընտրանք:2-րդ հարց՝Բերեք փաստեր ձեր տեսակետի օկտին: Աշակերտները պատասխանեցին ,յուրաքանչյուրը հիմնավորեց իր միտքը և կարծիքը և քննադատաբար վերաբերվեց ժամանակի հերոսների թույլ դիվանագիտության նկատմամբ:

ԼՂՀ

Խումբ 3-րդ- Նախիջևան- Կպչուն թղթերի վրա գրեցինք աշակերտներին հանձնարարվող հարցերը: Օրինակ՝հարց 1-Ինչ գիտենք Նախիջևանի մասին, Հարց 2-րդ՝Ինչպես կարող ենք ներկայացնել Մոսկվայի և Կարսի պայմանագիրը:

Նախիջևան

Խումբ 4, **Զանգեզուր,Լոռի և Ջավախք**- Կպչուն թղթերի վրա գրեցինք աշակերտներին հանձնարարվող հարցերը: Հարց 1-ին Ապացուցել եր Զանգեզուրի գոյամարտը ազգային- ազատագրական պայքար էր: Հարց 2-րդ/ Ով էր Գարեգին Նժդեհը ինչ գիտենք նրա մասին:Հարց 3-րդ-Ինչ գիտենք Ջավախքի և Լոռու մասին: Հարց 4-րդ-Ինչու Խորհրդային Վրաստանի պնդմամբ Ախալքալաքը մնաց իրենց կազմում:

Ջավախք **Զանգեզուր**

Աշակերտները պատասխանեցին ,յուրաքանչյուրը հիմնավորեց իր միտքը և կարծիքը և քննադատաբար վերաբերվեց ժամանակի հերոսների թույլ դիվանագիտության նկատմամբ:Կազմակերպվեց վեճ-մրցույթ խմբերի ավագների միջև,հետևյալ հարցի շուրջ՝**ԵԹԵ ԵՍ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԼԻՆԵԻ ԻՆՉՊԵՍ ԿՎԱՐՎԵԻ**



Քննադատական մտածողության համակարգը նպաստեց ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը,այլև գիտելիքները դարձրեց կիրառելի և նպաստեց ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները

- ✓ Կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք:
- ✓ Կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղածփոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնականկիրառություն գտնի:
- ✓ Կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխվում է սուբյեկտ-սուբյեկտ մոդելի: Դասարանում գլխավոր դերակատարը կդառնաաշակերտը/աշակերտակենտրոն ուսուցում/
- ✓ Աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններնինչպես են առնչվումմիմյանց հետ:
- ✓ Կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցածգիտելիքներիհամակարգում:
- ✓ Կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և

արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած

տեղեկություն:

Եզրակացություն

Այսպիսով, պատմության դասավանդման ընթացքում կարևորում եմ այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել ՔՄ հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

Օգտագործված գրականության ցանկ

1. 1. Аверьянов Л. Я. Социология: искусство задавать вопросы. Издание 2-е, переработанное и дополненное. Москва. Изд.-во “Москва” 998. 195 с.
2. 2. Лернер И. Я. Развитие мышления учащихся в процессе обучения истории. М.: Изд.-во “Просвещение”. 1982. 191 с.
3. 3. Сухомлинский В. А. Как развивать мышление и умственные силы детей. Москва. “Издательский Дом Шалвы Амонашвили”. 2002. 224 с.
4. 4. Халперн Д.Ф. Психология критического мышления. СанктПетербург. Изд.-во “Питер”. 2000. 496 с
5. . Block R. A. Education and thinking skills reconsidered. // American Psychologist. 1985. 40. P. 574-575.

6. 6. https://www.researchgate.net/publication/271429469_Camels_diamonds_and_conterfactuals_a_model_for_teaching_causal_reasoning
7. http://www.nwlink.com/~donclark/hrd/bloom.html
8. https://books.google.am/books/about/Classroom_questions.html?id=-uk8AAAAYAAJ&redir_esc=y
9. http://historicalthinking.ca/historical-thinking-concepts